

Հայաստան

Փետրվար, 2022 թվական

ՄԱԿ ՓԳՅ-ն 2021 թվականի դեկտեմբերին **Պաշտպանության նոր ռազմավարություն** մեկնարկեց, որը կուղղորդի գործակալության՝ պաշտպանության ուղղված միջամտությունները եւ գործառնական ընդհանուր վերջնարդյունքները 2022 թվականին:

2022 թվականին ՄԱԿ ՓԳՅ-ն ընդլայնեց **պաշտպանության մշտադիտարկման** միջոցառումները՝ ներառելու ՄԱԿ ՓԳՅ մտահոգության ներքո գտնվող բոլոր խմբերին, այդ թվում՝ ապաստան հայցողներին, փախստականներին եւ քաղաքացիություն չունեցողներին:

Պետական կառույցների հետ համատեղ ՄԱԿ ՓԳՅ-ն մարդասիրական օգնություն է տրամադրում Հայաստանում **փախստականի իրավիճակում գտնվողներին**, որոնք տեղահանվել են **Լեռնային Ղարաբաղի (ԼՂ)** հակամարտության հետեւանքով:

ՄՏԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՉՏԵՎՈՂ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ 2021 Թ. ՀՈՒՆԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Փախստականներ	3,401
Ապաստան հայցողներ	144
Փախստականի իրավիճակում գտնվող անձինք*	42,023
Քաղաքացիություն չունեցողներ	892
Ընդամենը	46,460

*Ներառյալ փախստականի իրավիճակում գտնվողները Սիրիայից եւ ԼՂ հակամարտության հետեւանքով տեղահանվածները:

ՇԱԳՄԱՆ ԵՐԵՔ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԿՐՆԵՐԸ

Փախստական	Ապաստան հայցող		
Աղբբեջան	1,212	Իրան	51
Իրաք	1,092	Սիրիա	19
Սիրիա	744	Կուբա	17

Տվյալների աղբյուր. ՀՀ կառավարություն եւ ՄԱԿ ՓԳՅ [Data finder platform](#)

ՇԵՏՏԱԴՐՈՒՄՆԵՐ

Պաշտպանության մշտադիտարկում

2021 թվականի ՄԱԿ ՓԳՅ-ն 5,804 հարցազրույց է անցկացրել համայնքների 25,746 անդամի հետ, որոնց մեծ մասը փախստականի իրավիճակում գտնվողներ էին: 2022 թվականին միջազգային սահմաններին կկազմակերպվեն հարցազրույցներ տեղեկատվության հիմնական աղբյուրների հետ, նպատակ ունենալով ամրապնդել համայնքային ցանցերը, վաղ ահազանգման համակարգերն ու արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը:

Պաշտպանության թեժ գիծ

ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է թեժ գծի սպասարկումը՝ կայուն հաղորդակցություն եւ հետադարձ կապ պահպանելու մտահոգության ներքո անձանց հետ: 2021 թվականի սեպտեմբերից մինչեւ 2022 թ. հունվարը թեժ գծին ստացվել է 1,317 հեռախոսազանգ մտահոգության ներքո գտնվողների կողմից:

COVID-19-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Շահերի պաշտպանություն. ՄԱԿ ՓԳՅ-ն, ԱՀԿ-ի եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ, ջատագովում է պատվաստման ազգային ծրագրում մտահոգության ներքո գտնվող անձանց ներառման համար, այդ թվում՝ անհատական խորհրդատվության եւ ուղղորդման միջոցով:

Հաղորդակցություն համայնքների հետ. Իյուրընկալող համայնքների եւ մտահոգության ներքո գտնվող անձանց հետ ՄԱԿ ՓԳՅ-ի համագործակցությունը շարունակվում է կանոնավոր դաշտային այցերի եւ թեժ գծի ծառայություն մատուցելու, ՄԱԿ ՓԳՅ հայաստանյան գրասենյակի **Ֆեյսբուքյան էջի** «Տեղեկատվություն Հայաստանի փախստականներին» տելեգրամային ալիքի, ինչպես նաեւ ՄԱԿ ՓԳՅ Հայաստանի «**Help**» վեբկայքի միջոցով:

Կանխարգելում. ՄԱԿ ՓԳՅ-ն եւ գործընկերները տարածում են COVID-19-ի կանխարգելման վերաբերյալ ԱՀԿ տեղեկատվական թերթիկները եւ պաստառները, համայնքապետարաններին եւ ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց բաժանում դիմակներ եւ այլ պաշտպանիչ պարագաներ:



Տեղահանված կինը հաց է թխում իր մեծ, բազմասերունդ ընտանիքի համար: Գետահովիտ գյուղ, Իջեւան, Տավուշի մարզ, փետրվար 2022 թ.: © ՄԱԿ ՓԳՅ/Արեգ Բալայան

Առանցքային գերակայություններ

- **Պաշտպանություն.** ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է փորձագիտական աջակցություն տրամադրել ՀՀ կառավարությանը՝ միջազգային չափորոշիչներին համահունչ երկարաժամկետ լուծումներ գտնելու փախստականների եւ տեղահանված անձանց համար:
- **Տարածքի հասանելիություն.** ՄԱԿ ՓԳՅ-ն կանոնավորապես մշտադիտարկում է մուտք գործելու անցակետերը՝ ապահովելու ապաստան հայցողների անարգել մուտքը տարածք, աջակցում ապաստանի ոլորտում ազգային կարողությունների զարգացմանն ու օժանդակում սահմանափակների եւ անցակետերի աշխատակիցների համար փախստականների իրավունքի դասընթացներին ինստիտուցիոնալ կարգավիճակ տալու:
- **Ապաստանի ընթացակարգեր.** ՄԱԿ ՓԳՅ-ն, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համատեղ, իրականացնում է ապաստանի տրամադրման վարչական եւ դատաիրավական ընթացակարգերի մշտադիտարկում, աջակցում կառավարությանը՝ ապաստանի ընթացակարգերի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: 2022 թվականին ՄԱԿ ՓԳՅ-ն կազմակերպում է ՀՀ ապաստանի համակարգի թերությունների ու կարիքների համապարփակ գնահատման իրականացում:
- **Համայնքների հզորացում եւ ինքնապավինում.** ՄԱԿ ՓԳՅ-ն մտահոգության ներքո գտնվող անձանց տրամադրում է նպատակային օժանդակություն՝ նպաստելու Հայաստանում նրանց ինտեգրմանը: Սոցիալ - հոգեբանական, իրավաբանական եւ բժշկական աջակցությանը զուգահեռ՝ փախստականներն օգտվում են նաեւ մասնագիտական վերապատրաստման, լեզուների ուսուցման դասընթացներից, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավմանն ու եկամուտների ստեղծման ծրագրերից: Համագործակցելով «MADE51»-ի հետ՝ տեղահանված կին ձեռներեցները զբաղվում են ավանդական արհեստագործությամբ, հուշանվերների եւ դիմակների արտադրությամբ:

Աշխատանք գործընկերների հետ

- ՄԱԿ ՓԳՅ-ն համագործակցում է պետական եւ ոչ պետական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Միգրացիոն ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հանրային պաշտպանի գրասենյակի, ԱԱԾ սահմանապահ զորքերի, ճյուղային նախարարությունների եւ դատական համակարգի, հորիզոնական, Ոստիկանության, մարզպետարանների եւ համայնքապետարանների, քաղհասարակության եւ զանգվածային լրատվամիջոցների հետ:
- **Արտաքին հարաբերություններ եւ հաղորդակցություն համայնքների հետ.** Հիմնական գործողությունները ներառում են մտահոգության ներքո գտնվող անձանց ծանուցումները եւ նրանց առջեւ ծառայած մարտահրավերների վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացումը, նրանց կրթումը սեփական իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ՝ Փախստականների

մասին գլոբալ համաձայնագրի ոգուն համահունչ, ներառյալ՝ **ՄԱԿ ՓԳՅ «HELP Հայաստան» վեբկայքի** միջոցով:

Արձագանքում ԼՂ հակամարտությանը

- ԼՂ հակամարտության հետեւանքով 2021 թվականի հունիսի դրությամբ Հայաստանում **36,989 անձ փախստականի իրավիճակում** է գտնվում, որոնց գերակշիռ մասը կանայք եւ երեխաներ են:
- Հակամարտության հետեւանքով փախստականի իրավիճակում շուրջ **1,100** տնային տնտեսություն 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձմեռային պարագաներ է ստացել: ՀՀ իշխանությունների հետ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում **118 տնային տնտեսության** տրամադրվել է տան վարձավճարի սուբսիդավորում, որպեսզի ձեռք բերված համաձայնության հիման վրա անբավարար պայմաններ ունեցող ժամանակավոր կացարաններից տեղափոխվեն առանձին բնակարաններ: Նրանցից մոտ **100 տնային տնտեսություն** 2021 թվականի դրությամբ եկամտի ստեղծման գործիքներ է ստացել՝ որպես կենսապահովման աջակցություն: 2021 թվականին ավելի քան **16,000 տնային տնտեսության** առաջնային կարիքները հոգալու նպատակով ոչ դրամական օգնություն է տրամադրվել:
- **Խաղաղ գոյակցության ծրագրերի ու համայնքային աջակցության նախաձեռնությունների շրջանակում** 2022 թվականի հունվարին տեխնիկական օգնություն է տրվել Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերի համայնքապետարաններին, որոնք համալրվել են ոլորտային ՀԿ-ների տրամադրած օժանդակությամբ:

Ապաքաղաքացիություն


- Հայաստանը միացել է ապաքաղաքացիության մասին ինչպես 1954 թվականի, այնպես էլ 1961 թվականի կոնվենցիաներին:
- 2019 թվականին Ապաքաղաքացիության վերաբերյալ բարձրատիճան պաշտոնյաների սեկցիայի ժամանակ տված խոստումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջերս ընդունեց «Քաղաքացիության մասին» օրենքի երկար սպասված փոփոխությունները, որոնք Ադրբեյջանից եկած քաղաքացիություն չունեցող փախստականներին մինչեւ 2023 թվականի վերջը թույլ կտան օգտվել հպատակագրման պարզեցված գործընթացից:

ՄԱԿ ՓԳՅ-ի ներկայությունը Հայաստանում

Անձնակազմ	Գրասենյակներ
31 տեղացի աշխատակից	1 գրասենյակ Երեւանում
6 միջազգային աշխատակից	1 գրասենյակ Գորիսում

Ֆինանսական տեղեկություններ (առ 2022 թվականի փետրվարի 15-ը)

Ֆինանսական պահանջներ 12.7 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ



ՄԱԿ ՓԳՅ-ն շնորհակալություն է հայտնում հետեւյալ դոնոր կառույցներին, որոնք 2022 թվականի գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար:

Շվեդիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | Դանիա | Գերմանիա | Շվեյցարիա | Բելգիա | Իռլանդիա

ՄԱԿ ՓԳՅ-ն երախտապարտ է 2022 թվականին Հայաստանում իրականացվող իր ծրագրերին աջակցող դոնորին:

Եվրոպական միություն